

## Լիլիթ ԱՎԵՏԻԿՈՎԱՆ

### ՀՈՍՍՆԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՍԵՍԱՏՈՒԹՅՈՒՆ-ԴԱՐՁՎԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐՈՒՄ

Լեզվի դարձվածային կազմում առանձնահատուկ տեղ ունեն համեմատություն – կայուն կապակցությունները, որոնք լեզվաբանական գրականության մեջ կոչվում են նաև համեմատական դարձվածային միավորներ (*ՀԴՄ*) կամ համեմատություն - դարձվածային արտահայտություններ։<sup>1</sup> ՀԴՄ-ների հիմքում ընկած է պատկերավոր համեմատությունը, որն արտահայտում է մի առարկայի ու նրա հատկանիշի կամ գործողության ու նրա հատկանիշի հարաբերությունը մեկ որիշ առարկայի հատկանիշի, գործողության հիմնական կամ ընդհանուր հատկանիշների հետ։

ՀԴՄ-ների կազմության համար անհրաժեշտ են երեք անդամներ. համեմատության առարկան կամ սուբյեկտը, համեմատության հենակետը, որը պատկերավորության կրողն է և այն ընդհանուրը, որը հատուկ է թե՛ սուբյեկտին, թե՛ համեմատության հենակետին։<sup>2</sup> Հնմուն. Եղիսան (1) ձկան պես (2) լուռ է (3)/ Եղիսան (1) լուռ է (3) ինչպես ձուկը (2): Աղջիկը (1) մոմի պես (2) հալվում է (3)/ Աղջիկը (1) հալվում է (3) ինչպես մոմը (2): ՀԴՄ-ների կազմում մշտական անդամներ համարվում են վերջին երկուսը։

Արդի հայերենի ՀԴՄ-ները կազմվում են պես և նման կապերով, այլև՝ չափ, ինչպես (*որպես*), *իբրև*, *ասես*, *կարծես*, *ոճց որ* համեմատական բառերով: Հնմուն. քարի նման լուռ, բոչունի պես ազատ, տաշեղի նման թերև, գրանիտի պես ամուր, մի բաժակ ջուր խմելու չափ հեշտ, քափվել ինչպես առատության եղջյուրից, իբրև մորից նոր ծնված, ասես որուս պարզ երկնրից, կարծես ասենեների վրա նստած լինել:

ՀԴՄ-ների առանձնահատկություններից մեկն է հոմանշային հարաբերությունների մեջ նտնելու կարողությունն է: Նրանցում քիչ են այն դարձվածքները, որոնք չունեն դարձվածային հոմանիշներ: Ընդհանրապես մասնագիտական գրականության մեջ հոմանիշներ են համարվում միևնույն հասկացությունն արտահայտող այն բառերը, որոնք տարբեր են ձևական կողմով, իսկ իմաստային կողմով կամ նոյնական են, կամ ունեն նրբերանգային, հուզարտահայտչական կամ ոճական և գործառական տարբերություններ։<sup>3</sup>

Դարձվածաբանական գրականության մեջ գոյություն ունեն դարձվածային հոմանշային տարբեր, այլև միմյանց լրացնող սահմանումներ։<sup>4</sup> Առավել հիմնավորը և ամբողջականը մեր կարծիքով հետևյալ սահմանումն է. «Դարձվածային հոմանիշներ են այն տարակազմ և նոյնակազմ դարձվածային միավորները, որոնք ունեն միևնույն նշանակությունը՝ միավորների ձևային պատճառաբանվածության անհամապատասխանությամբ և իմաստային նրբերանգների, ոճական-գործառական պատկանելության ու կապակցելիության հնարավոր տարբերություններով հանդերձ»:<sup>5</sup>

Այսպիսով, ինչպես բառային, այնպես էլ դարձվածային հոմանիշներին հատուկ են՝ ա) տարբեր ձև, ընդհանուր նշանակություն ունենալը, բ) իմաստային ու ոճական տարբեր երանգներ արտահայտելը:

<sup>1</sup> *Л. И г н а т ь е в а, Структурные и семантические свойства фразеологических единиц с фразеообразующим компонентом «как» в современном русском языке (АКД), Л., 1976, стр. 3-4; Հնմուն. Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Եր., 1986, էջ 126, 261, 263, 271; Պ. Բեղիկյան, Ժամանակակից հայերենի ոչ վոխսաբերակամ կայտն բառակապակցությունները, Եր., 1990, էջ 50 – 51:*

<sup>2</sup> *Ա. Խ ա զ ա ր յ ա ն, Ֆրազеология современного французского языка, М., 1987, стр. 112.*

<sup>3</sup> *Վ. Ա ռ ք բ ե լ լ ա ն, Ա. Խ ա զ ա ր յ ա ն, Ա. Է լ լ ո յ ա ն և ո յ լ ո յ ա ն, Ժամանակակից հայերենի պատճառաբանվածության անհամապատասխանությամբ և իմաստային նրբերանգների, ոճական-գործառական պատկանելության ու կապակցելիության հնարավոր տարբերություններով հանդերձ*

<sup>4</sup> *Հնմուն. Ս. Արքահամյան, Հայոց լեզու, Բառ և խոր, Եր., 1978, էջ 158: Ս. Սուրիանյան, Հոմանիշները ժամանակակից հայերենում, Եր., 1971, էջ 270: Ա. Մոլոտկով, Основы фразеологии русского языка, Л., 1977, стр. 163; Ա. Назарян, Образные сравнения французского языка, М., 1965, стр. 8.*

<sup>5</sup> *Ի. Չ ե ր ն ա շ ե վ ա, Ֆրազеология современного немецкого языка, М., 1970, стр. 81:*

*Ա. Հոմանշից ՀԴՄ-ների դասակարգումն՝ ըստ իմաստային և ոճական - գործառական հատկանիշների:* Դարձվածարանական գրականության մեջ այս առումով առանձնացվում են հոմանիշների երեք տիպեր:

1. Տարբեր կառուցվածքով, բայց մեկ ընդհանուր անդամով հոմանիշ դարձվածներ
2. Տարբեր բառային կազմով հոմանիշ դարձվածներ կամ բուն համանիշներ:<sup>6</sup>
3. Ոճական հոմանիշներ:

Հոմանշային տարբերակները հաճախ միևնույն իմաստուն են արտահայտում՝ հանդես գալով որպես դարձվածային նույնանիշներ: Հննտ. աղբյուրի պես հոսել // հորդել // խփել // եռալ // բխել (առատորեն և անվերջ զայ), դանակի // դաշույնի պես սիրու խրվել (խոր խոցվել), խելագարի // խենքի պես սիրել (չափազանց շատ, ինքնամոռաց սիրել): Հննտ. Նա խենքի պես սիրում էր մանավանդ Ավանի բարձր պարհապներով շրջապատված այգին....(ՍԽՀ, 501): -Իմացիր, Արևիկը խելագարի պես սիրում է Քաջանց Գարեգինին (ն.տ., 584):

Բուն դարձվածային համանիշները, որոնք կազմվում են տարբեր բառային միջոցներով, ունենում են իմաստային և հոգարտահայտչական տարբերություններ: Հննտ. Ասես գետնի տակն անցավ, ասես ջրի տակը սուզվեց, ասես քամին տարավ, ասես երկինք համբարձվեց, ոնց որ դանակով կտրես (անհետանալ, չքանալ, չքվե): Տերևի նման բիբրալ, ուռու պես դրղալ, շան պես վախենալ (սաստիկ վախենալ): Զամու նման բոչել, կայծակի նման պլանալ, հողմի պես սուրալ (շատ արագ բռչել, պլանալ):

Դանակի//դաշույնի պես սիրու խրվել, նետի նման ցցվել սրտում, սուր սլաքների պես քափանցել մինչև սրտի խորքը, ծանր մուրճի պես հարվածել զիսին, օճի պես խայթել, կայծակի պես շանքել, գանգի մեջ ասես ասեղներ տնկվել («խոր խոցվել» ընդհանուր իմաստով): Հննտ. Ամեն մի բառդ մի դաշույնի պես ականջու է խրվում (ՍՍ, 327): Վերջին խոսքը այնպիսի նադառու ձայնով արտասանեց փոքրիկ երիտասարդը, որ նետի նման ցցվեցավ մեծափառ Պարթևի սրտում (Բ, 83): Նրա ականջների մեջ դեռ զարկում էին մոր կծու խոսքերը և սուր պաքների նման քափանցում էին մինչև սրտի խորքը (ն.տ., 360): Ծանր մուրճի պես հարվածեց այդ ամենը նրա զլսին (Դ-Բ, 168): Այս եր արտահայտում նրա դիմացին ժամանեց Սիրայելին (ԱԾ, 4, 343): Վերջին խոսքերը կայծակի պես շանքեցին Սերուժանի քարացած սրտին (Բ, 535): Սլիքարի գանգի մեջ ասես ասեղներ ցցվեցին (ՍԽՍ, 548):

Ինչպես տեսնում ենք, այսուեղ առկա են «շատ խոր խոցել» ընդհանուր իմաստով հոմանիշ ՀԴՄ-ներ, որոնց միջև առկա է իմաստային սաստկության աստիճանականություն (գրադացիա): Իսկ, ասենք ուռու պես դրղալ, շան պես վախենալ հոմանշային զույգը դրսմարտում է հոգարտահայտչական տարբերություններ:

Դարձվածային ոճական հոմանիշներն առանձնանում են լեզվի գործառական տարբեր ոճերում ունեցած կիրառությամբ:

Հննտ. Գիսավոր աստղի պես փայլել (գրք.), պոշով աստղի պես երևալ (խսկց.) - ուշ-ուշ երևալ: Ձքի նման սորացնել (խսկց.), ջաղացի պես սորոր տալով անցնել (բրք.) - արագ-արագ կարդալ: Ապուշի պես (արհմրի), իշացածի պես, տավարի պես (գրիկ) - հինարարար: Աղբյուրի պես գալ (համագործած.), վարար գետի նման հոսել (գր.), թափվել ինչպես առատության եղջյուրից (գրք.), սելավի պես թափվել (բրք.) - ուժեղ հորդել:

Հննտ. Գալիս է նավքը, գալիս աղբյուրի պես (ԱԾ, 7, 75): Սեր կյանքում ուազմական փողի նման թնդում էին Գալան - Քարիպայի ազատ երգերը, վարար գետի նման հոսում էին Բաֆֆու վեպերը՝ ամրնիատ խորիրդավոր (ՀԹ, 476): - Սելավի պես կար է տալիս (ՆԶ, 427):

<sup>6</sup> U. Արքահամայն նշան, նշվ. աշխ., էջ 158: A. Հազարյան, նշվ. աշխ., էջ 9: I. Չերնյաշևա, նշվ. աշխ., էջ 144:

<sup>7</sup> О. Н е в е д о м с к а я, Компаративные фразеологизмы немецкого языка в сопоставлении с русскими (АКД), Л., 1973, стр. 7; М. Фомина, Русская лексика и фразеология, ч. 1, М., 1965, стр. 25 - 27; И. Чернйашева, նշվ. աշխ., էջ 91:

**Բ. ՀԴՄ-ների հոմանշային շարքը:** Ինչպես բառային, այնպես էլ դարձվածային հոմանիշների շարքը համաժամանակյա (սիմիլարմիկ) լեզվական կարգ է: Դարձվածային հոմանիշների շարքը երկու կամ ավելի դարձվածքների փունջն է: Թե՛ բառային, թե՛ դարձվածային հոմանիշների համար «հոմանշային շարք» տերմինից բացի կիրառվում են նաև «հոմանիշների փունջ» կամ «հոմանիշների բույն» տերմինները:<sup>8</sup>

**ՀԴՄ-ների դեպքում դարձվածային հոմանիշների շարքերը բանակական ընդգրկումներով կարող են տարբեր լինել՝ ներառելով երկուսից մինչև տասնիններ, երբեմն ավելի ՀԴՄ-ներ: Չենքող դարձվածքների հոմանշային շարքերի մեջ մեծամասնություն են կազմում երկու, երեք և չորս դարձվածքներ ընդգրկողները: Սեր տվյալներով առավել շատ հոմանիշ ՀԴՄ-ներ ունեցող շարքերից է «պնդակազմ» ընդհանուր իմաստով միազգագրա հոմանիշ դարձվածքների հետևյալ շարքը:**

Երկարի պես, պողպատի պես, գրանիտի նման, պատի պես, պարսպի նման, կոճղի նման, կաղնու պես, ծաղի պես, ցուլի պես, առյուծի պես, փոխ նման, ժայռի պես, սարի պես, լոռան նման, Գարոսայի նման (15 դարձվածք):

Իր ընդգրկունությամբ աշքի ընկնող հոմանիշ ՀԴՄ-ների շարքերից է նաև որպես նվազաւոյթ հանդես եկող «չափազանց փոքր» ընդհանուր իմաստով ՀԴՄ-ների հետևյալ փունջը. Ասեղի ծայրի չափ, քորոցի զիսի չափ, եղունզի չափ, թռչունի կոտոցի չափ, ծտի աշքի չափ, կորեկի չափ, մասուրի չափ, բալի նման /չափ, լուցկու տուփի չափ, մազի չափ (10 դարձվածք):

«Անմտաքար, մոլեզնած» ընդհանուր իմաստով հետևյալ հոմանշային շարքը ներառում է ինը հոմանիշ ՀԴՄ-ներ. Գծի պես, ցնդվածի պես, խենքի պես, խեկազարի պես, կրակից փախչողի պես, խայրվածի պես, կայծակնահարի պես, շանքահարի պես, սպանվածի պես (վազել, փախչել, դուրս գալ, ցատկել տեղից, վեր թռչել և այլն):

**Գ. Հոմանշուրյուն և բազմինաստուրյուն:** Լեզվական այս երկու երևույթներն ակնառու ընդհանրություններ ունեն: Դարձվածքների՝ հոմանշային կապերի մեջ մտնելու հնարավորությունը զգայինը առնչվում է նրանց բազմիմաստուրյան հետ: Բազմիմաստ դարձվածքի իմաստային տարբերակները գործածվում են ինչպես միևնույն, այնպես էլ տարբեր հոմանշային շարքերում:

Դարձվածային հոմանշային շարքի անդամները նրբիմաստային և հուզարտահայտչական տարբերություններով հանդերձ՝ միավորվում են ըստ ընդհանուր իմաստի: Այդ իմաստի ծավալային ընդգրկումը կարող է հանգեցնել նրան, որ հոմանշային նոյն շարքի ներառում կազմվեն իմաստով իրար ավելի մոտ խմբեր: Հնմոտ. Գրանիտի պես, երկարի պես, պողպատի նման, պատի պես, պարսպի նման, կոճղի նման, ծաղի պես, կաղնու պես, ժայռի պես:

Չենքող ՀԴՄ-ների հոմանշային շարքի ներառում գրանիտի պես, երկարի պես, պողպատի պես, պատի պես, պարսպի նման դարձվածքները կազմում են հոմանշային մի խումբ՝ «ամուր, դիմացկուն» իմաստով, իսկ կոճղի նման, ծաղի պես, կաղնու պես, ժայռի նման, սարի պես ՀԴՄ-ները՝ մի այլ խումբ՝ «մնայուն, հաստատուն» նրբիմաստով: Հնմոտ. 1. Միջրոյի՝ գրանիտի պես ամուր այդ մարդու պատմությունը 1915-1920 թվականների արևանտահայության ճակատագրի կարդինալը է (ՎՊ, 458): -Ականաներս այժմ, տես, երկարի պես են (ԱԾ, 2, 148): Բայց ես ամուր էի՝ պողպատի նման (ՎԱ, 367): Պատի պես ամուր շարվեցե՞ր կանգուն (ՄԲ, 275): Ողջ գյուղը կանգնեց՝ պարսպի նման (ՀԹ, 178): 2. Նրանցից առաջ եկալ մի գորական, կարճահասակ, կոճղի նման հաստատուն (ԴՊ, 398): Չոր ծաղի պես ես եմ կեցել, ընկերներս հող են դառել (ՄԲ, 122): Հարյուր տարի էն ծնակի կաղնու պես կանգնած էի (ՎԱ, 195): Այս կրծքով ժայռի պես կանգնեմ Միլեզնած հետիւնի ճամփին (ՀՍ, 283): -Եքա տղեղ լուտեղ սարի պես կանգնած, անխոս թռչունքին ես ասու՞ն, - կանչեց նա զայրազին (ՆԴ, 83):

Հոմանշային հարաբերությունների մեջ մտնում են ինչպես մեմիմաստ, այնպես էլ բազմիմաստ ՀԴՄ-ները: Ինչքան իմաստներ ունի տվյալ բազմիմաստ ՀԴՄ-ն, այնպան հոմանշային շարքեր կարող են կազմել: Հնմոտ. «Զրի պես» դարձվածքը

<sup>8</sup>Ա. Սոթիա և սյան նկատմամբ, Հոմանիշները ժամանակակից հայերենում, Եր., 1971, էջ 135:

<sup>9</sup>Սիազարաք ՀԴՄ-ների մասին տեսն Խ. Բաղրամյան, Եղվ. աշխ., էջ 139, 259-261: Ա. Հազարյան, Եղվ. աշխ., էջ 115:

բազմիմաստ է, ունի՝ 1. շատ վարժ, անգիր (իմանալ), 2. անխնա, շռայլորեն (փող ծախսել), 3. առատորեն (հոսել) իմաստություն:

Իր առաջին իմաստով այն մտնում է հետևյալ հոմանշային շարքի մեջ. Զրի պես, իինց մատի պես, փրփորի պես, Հայր մերի պես, Ավետարանի պես (գիտենալ, իմանալ, ճանաչել):

Իր երկրորդ իմաստով այն հոմանիշ է թածա հացի պես (գնալ, փող ծախսել) դարձվածքին, իսկ երկրորդ իմաստով՝ աղբյուրի պես, գետի պես, ինդեղի պես (հոսել, թխել հորդել) դարձվածքներին:

«Լոյսի պես» ՀԴՄ-ն ունի՝ 1. շատ գեղեցիկ, 2. մարմնով սպիտակ, 3. շատ պարզ, ակնհայտ իմաստները և համապատասխանաբար հանդես է գալիս երեք տարբեր հոմանշային շարքերում: Հմնտ. 1. լոյսի պես, հրեշտակի պես, ինչպես մի պատկեր, ինչպես նախշ ու նկար: 2. Լոյսի պես, կարի պես, բամբակի նման, ձյունի պես (սպիտակ), փրփորի պես (ճերմակ): 3. Լոյսի պես, օրվա պես, արևի պես, երկու անգամ երկու՝ չորսի պես (պարզ):

«Կրակի նման» ՀԴՄ-ն ունի՝ 1. շատ ճարպիկ, աշխույժ, 2. չափազանց արագ իմաստները, որոնցով էլ առանձին - առանձին հոմանշային շարքեր է կազմում: Հմնտ. 1. Կրակի նման, կատովի նման (ճարպիկ): 2. Կրակի նման, ծոփ պես, քանու նման, կայծակի նման, հողմի պես (շատ արագ վլանալ, քոչել):

«Ծոփ պես» դարձվածքը բացի «շատ արագ» իմաստը, ունի նաև «շատ քերև» նշանակությունը, որով էլ այն համանիշ է տաշեղի նման, հովի պես, փետուրի պես (քերև) ՀԴՄ-ներին և այլն:

Դ. Հոմանիշ ՀԴՄ-ների դասակարգումն ըստ ծևարանական արժեքի: Դարձվածային հոմանիշների մեջ առանձին խումբ են կազմում տրամարանորեն հասկացություն արտահայտող դարձվածային միավորները: Դարձվածքի ծևարանական արժեք ասելիս նկատի է առնվազն նրանով արտահայտված հասկացությունը, խորիմասային պատկանելությունը. դարձվածքն այս կամ այն խոսքի մասին համարժեք է առաջին հերթին իր արտահայտած իմաստով:

Ըստ ծևարանական արժեքի՝ հայերենում հանդիպում են մեծ մասամբ ածականական, բայական և մակրայական հոմանիշ ՀԴՄ-ները.<sup>10</sup>

1. Ածականի արժեք ունեցող հոմանիշ ՀԴՄ-ներ: Այդպիսիք հանդես են գալիս կապական կառույց + ածական կամ ածական + կապային կառույց տարրերակներով: Հմնտ. 1. Կոճորի պես, քարի պես, գերեզմանի պես, ծկան պես (լուռ, սառն, համը): 2. Կարմիր ինչպես վարդը, կարմիր ինչպես հորդը, բոսոր ինչպես արյունը: 3. Հին ինչպես աշխարհը, երկրագնդի պես իին, Արամի շափ ծեր:

Ինչպես տեսնում ենք, ածականի արժեքով հոմանիշ ՀԴՄ-ների կառուցվածքային տարրերակները հանդիպում են նաև միևնույն հոմանշային շարքում: Ածականական հոմանիշ ՀԴՄ-ներն արտահայտում են մարդկանց և իրերը բնութագրող հասկացությունները: Հմնտ. 1. Ինչպես ջրի երկու կարի, ինչպես մի խճոր՝ երկու կես արած, ինչպես մի սաշի հաց, ինչպես մի ծառի պտուղ (իրար շատ նման ներքինով, արտաքինով): 2. Ածուխի պես սև, կուպրի նման սև, մրի պես սև, սաքի պես սև, սարյակի թևի նման սև, խեժի պես սև (գերազանցապես ասվում է դեմքի, ձեռքերի, հագուստի շափանց սև լինելու դեպքում):

Հոմանիշ ՀԴՄ-ների այս փնջում առկա են «աև» գունանիշ ածականով դարձվածքներ: Ածականական ՀԴՄ-ների շատ հոմանշային շարքեր կազմվում են հենց գունանուն բաղադրիչով դարձվածքներով:<sup>11</sup>

2. Սակրայի արժեք ունեցող հոմանիշ ՀԴՄ-ներ: Սակրայական ՀԴՄ-ները ևս դասվում են ոչ հաղորդակցական դարձվածքների թվին: Սակրայի արժեքով ՀԴՄ-նե-

<sup>10</sup>Հազվադեպ համակառում են եղանակավորող հոմանիշ ՀԴՄ-ներ: Դրանք խոսքը երանգավորող համեմատություն-դարձվածքներ են: Հանդիպում են կապ+կապ խնդիր կառուցվածքով: Հմնտ. Հակառակի պես, քարի պես, սատանայի պես: Ալսայոր պես, եղբոր նման և այլն:

<sup>11</sup>Գունանունների դարձվածակազմից դերի մասին տես L. Խաչատրյան, Խորիմասային տարածեքությունն արդի հայերենի կայտն կապակցություններում, Եր., 1996, էջ 94-106, Գունանուն ՀԴՄ-ների քննությունը տես L. Խաչատրյան, Գունանուն բաղադրիչով համեմատություն-դարձվածային միավորներն արդի հայերենում («Բանքեր ԵՊՀ-ի», Եր., 1999):

ուսմ մակրայի առկայությունը պարտադիր չէ: Ավելացնենք, որ բուն մակրայներով ՀԴՄ-ներ հայերենում գրեթե չկան, առկայն նրանցում կարող են լինել այնափառ, որոնք խոսքային միջավայրում, նայած լրացյալն, դիտվեն կամ իրքն ածականներ, կամ իրքն մակրայներ: Հմնտ. Ու բիրու, վայրենի, կանգնեց, ինչպես սար (մակրայ/ձևի պարագա), (ՀՇ,151): Սի քանի սև փողերի համար սարի պես տղամարդը շուր անցավ (ածական /որոշիչ), (ՊՊ,51):

Ասվածը կարելի է դիտել նաև ՀԴՄ-ների միևնույն հոմանշային շարքում:

Հմնտ. Բացարձակ անհերեթ ուսմունքներ հավանաբար չկան, յուրաքանչյուրը թեկուզ քորոցի գիշի չափ ճշմարտություն պետք է ունենա իր հիմքում, որ հենվի նրան (ածական/որոշիչ), (ԱԱ,302): Գեղեցիկ էին նրա սլացիկ իրանը, բայի նման փոքրիկ թերանը, բարեկազմ մերկ ոտքերը (ածական/որոշիչ), (ԱԽՀ,13): Ո՞ւմ բախտից եր, թեկի դստե՞ր, թե՞ բախտից եր պատանու, Որ սև դամեն կողն եր խրվել կտուցի չափ աղավնու (մակրայ/չափ ու քանակի պ.), (ՀԸ,57): Բայց ոչինչ...չպիտի մազու չափ հուսահատվել (մակրայ/չափ ու քանակի պ.), (ԱԾ,2,233):

Հայերենում մեծ մասամբ առկա են մեկ լիիմաստ և մեկ թերիմաստ բառից՝ կապից կամ կապական բառից կազմված հոմանիշ մակրայական ՀԴՄ-ներ, այլ կերպ ասած՝ նիսագագար (ածանաւերասինիու ԿՓԵ) ՀԴՄ-ներ: Կարող են պատահել այս կառույցի ծավալումներով մակրայական հոմանիշ ՀԴՄ-ներ: Հմնտ. աշխարհի չափ, ծովի պես, բայց՝ մազերի համրանքի չափ, երկնքի աստղերի չափ, ծովի ակազի չափ (անչափ, անքանակի):

Միսագագար ՀԴՄ-ներում ևս կարող են լինել փոխանունություններ: Հմնտ. մոլորվածի նման, մի քան կորցրածի պես, սպանվածի պես (Վշտարեկ, ընկճված): Հոմանիշ մակրայական ՀԴՄ-ները առավել արտահայտիչ են դարձնում գործողությունների հատկանիշները՝ պատկերավորություն տալով խոսքին:

3. Բայական հոմանիշ ՀԴՄ-ներ: Բայական ՀԴՄ-ների գերադաս բաղադրիչը պարտադիր բայ է: Դրանք հանդես են գալիս բայ + գոյական + կապ կառույցով, ինչպես նաև սոռորադասական նախադասության ձևավորումով: Հմնտ. Սպունզի պես ծծել, խողովակի պես ընդունել, ծծանի պես կլանել (արագ, անմիջապես յուրացնել): Ծիի պես անցնել, երազի նման անձանալ, միրաժի պես չքանալ (աննկատելի և արագ անցնել, անձանալ): Կարծես այս աշխարհում չինել, ասես մորից նոր ծնվել (ցնծորյան մեջ լինել): Կարծես երկնքից է, կարծես լուսնից է իջել, կարծես այս աշխարհից չէ (արտահայտում է զարմանք կամ զայրույթ նրա նկատմամբ, ով չզիտի որևէ հանրահայտ քան): Փոխվել ինչպես երազում, շուր գալ ինչպես հերիաքում (արագ և հիմնովին փոխվել): Տարբերվել ինչպես սև սպիտակից, հեռու լինել ինչպես երկնքը երկրից (չափազանց տարբեր լինել):

Բայական ՀԴՄ-ները, ինչպես առհասարակ բայական կապակցությունները, ծավալման ավելի մեծ հնարավորություններ ունեն, քան մյուս ՀԴՄ-ները: Բայական ՀԴՄ-ների հոմանշային շարքերում հանդիպում են ինչպես երկանդամ, այնպես էլ բազմանդամ ՀԴՄ-ներ: Հմնտ. Հորի պես պտտվել, որովհետ բարակի պես վազել, սատանի շարիսի պես դառնալ (անընդհատ շարժման մեջ լինել):

Ասես երկինք համբարձվեց, ասես գետնի տակն անցավ, կարծես քամին տառվ, ասես ջրի տակը սուզվեց, ոճոց որ դանակով կտրես (անհետանալու, չքանալու մասին): Կոտրած գդալի պես մեջ ընկնել, քանի ճանճի նման մեծատեղ ընկնել (խառնվել իրեն չվերաբերող գործերին): Իրեն զգալ ինչպես մոր փորում, ապրել ինչպես Աքրահամի գոգում (լիուրյան մեջ ապրել):

Բայական հոմանիշ ՀԴՄ-ներում ևս կարող են լինել փոխանունություններ: Հմնտ. Մոմի նման ամեն կողմ շուր տալ, բայց՝ ուզածի պես խաղացնել (մեկին ստիպել իր ուզածի պես վարվել):

Այսպիսով՝

1. ՀԴՄ-ները երկանդամ, կայուն, վերահմաստավորված բառակապակցություններ են, որոնց հիմքում ընկած է պատկերավոր համեմատություններ:

2. ՀԴՄ-ներին բնորոշ առանձնահատկություններից մեկն այն է, որ կարող է ունենալ հոմանշային զոյզեր կամ շարքեր:

3. Հոմանիշ ՀԴ-ներում առանձնանում են հոմանշային տարբերակները, որոնք մեծ մասամբ հանդիպում են նոյնանշիների հետ, քեզ դրսևորում են նրբինաստային ու հոլովատահայտչական տարբերություններ, և միմյանց նկատմամբ ոճական - գործառական տարբերություններ դրսևորող ոճական հոմանիշները:

4. Դարձվածային հոմանիշների շարքը համաժամանակյա (սինխրոնիկ) իրողություն է: ՀԴ-ների հոմանշային փունջը կազմվում է երկու և ավելի (մինչև տասնվեց) դարձվածքներից:

5. Դարձվածային հոմանիշները պատկանում են միևնույն քերականական կարգին: Արդի հայերենում ավելի շատ հանդիպում են ածականական, բայական և մակրայական հոմանիշ ՀԴ-ներ:

#### ՀԱՍՏԱՏԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐ

- ԱԻ - Ալ. Խսահակյան, Երկեր, հ. 1, Եր., 1958:  
ԱԾ - Ալ. Շիրվանզադե, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, 4, 7, Եր., 1950 – 51:  
ԱՍ - Ա. Սահինյան, Կեռաններ, Եր., 1976:  
ՎԴ - Վ. Գևորգյան, Վարդանանց, Եր., 1987:  
ՀԹ - Հովհ. Թումանյան, Ընտիր երկեր, Եր., 1978, Երկերի լիակատար ժողովածու, Եր., 1991, հ. 4:  
ՀԸ - Հովհ. Շիրազ, Միամանը և Խցեզարե, Եր., 1970:  
ՀՍ - Հ. Սահյան, Բանաստեղծություններ, հ. 1, Եր., 1967:  
ՆԴ - Նար - Դու, Պատմվածքներ և վիպակներ, Եր., 1978:  
ՆԶ - Ն. Զարյան, Հացավան, Եր., 1960:  
ՊՊ - Պ. Պողյան, Երկերի ժողովածու, հ. 5, Եր., 1963:  
ՍԽՀ - Ս. Խանգայյան, Հոռը, Եր., 1957:  
ՍԽՆԸ - Ս. Խանգայյան, Միսիար Սպարապետ, Եր., 1963:  
ՍՍ - Ս. Սեֆերյան, Խմաստախու Շերսայիր, Եր., 1986:  
ՎԱ - Վ. Անանյան, Լեմեր Հայենի, Եր., 1963:  
ՎՊ - Վ. Պետրոսյան, Հավասարում բազմաթիվ անհայտներով, Եր., 1977:  
Ք - Քաֆֆի, Սամվել, Եր., 1967:

### СИНОНИМИЯ КОМПАРАТИВНЫХ ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ ЕДИНИЦ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА

Резюме

Л. Аветисян

Компаративные фразеологизмы (КФ) активно синонимизируются. В семантическом и функционально-стилистическом аспектах у КФ-синонимов различаются равноценные, неравноценные и стилистические синонимы. КФ-синонимы выступают в функции одной и той же части речи. В современном армянском языке встречаются глагольные, адъективные, наречные КФ-синонимы.